ՀՏԴ 7.071.1

ԶԱՐԴԱՐՅԱՆԱԿԱՆ «ՁԳՏՈՒՄ»-ԻՑ ՄԻՆՉԵՎ «ՊՈՌԹԿՈՒՄ» ՆԿԱՐԱՇԱՐԸ

Լ.Ա. Արսենյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. *թեմատիկ ժանր, Հովհաննես Զարդարյան, Ձգտում, Պոռթկում, նկարաշար*

Խորհրդահայ կերպարվեստում թեմատիկ ժանրի առաջատարներից մեկն էր գեղանկարիչ Հովհաննես Զարդարյանը: Նրա ստեղծագործություններում առանցքային տեղ են գրավում 1940-1950-ական թվականներին վերաբերող հորինվածքները: Սակայն այս ժանրի շրջանակներում իր անխախտ տեղն ու կարևորությունն ունի նաև 1960-ին ստեղծված «Ձգտում» հորինվածքը, որի մտահղացման շարժառիթն ու կերտման ստեղծագործական ընթացքը հայտնի չէ արվեստասեր հասարակությանը: Հայտնի չէ նաև այն, որ հանրահայտ «Ձգտում»-ից հետո նկարիչը վրձնել է նաև մի նկարաշար, որը, կարելի է ասել, «Ձգտման» գաղափարական շարունակությունն է: Խոսքը «Պոռթկում» նկարաշարի մասին է (1962–1964 թթ.), ուր ձգտումը պարզապես վերածվել է պոռթկման անգուսպ տենչի: Ավաղ, այն առաջին անգամ ցուցադրվել է միայն 1998 թ. Զարդարյանի հետմահու անդրանիկ պատկերահանդեսին: Վարպետի ստեղծագործական կյանքում հատկապես վերոնշյալ հորինվածքներն են ազդարարում այն բեկումնային փոփոխությունները, որոնք տարիների ընթացքում ձևավորեցին Զարդարյան գեղանկարչի ուրույն ձեռագիրը, նրա անկրկնելի անհատական դեմքը:

Խորհրդահայ գեղանկարիչ Հովհաննես Զարդարյանի ստեղծագործական կյանքը բաղկացած է երկու փուլից, որոնց ընթացքում վարպետն իրապաշտական մոտեցումից աստիճանաբար անցում է կատարել դեպի անառարկայական, անգամ վերացական հորինվածքային մտածողություն: Այս առումով բեկումնային է 1960 թվականը: Հատկապես այս թվականից սկսած է նկարիչը ներկայանում որպես որոշակի գեղագիտական, փիլիսոփայական խնդիրներ առաջադրող նորարար, մտածող-արվեստագետ:



Նկ. 1. Ձգտում, 1960 թ.

Նկարչի հասուն ստեղծագործական փուլը նշանավորում է «Ձգտում» (1960, ՀԱՊ, նկ. 1) թեմատիկ-հորինվածքային կտավը, որն աչքի է ընկնում գունապնակի հնչեղությամբ, կերպարների՝ առավել բանաստեղծորեն փոխակերպված այլաբանական մեկնաբանմամբ ու իմաստային շեշտերով: «Ձգտում» կտավի գաղափարը Զարդարյանի մոտ ծագել էր Բյուրականում տեղի ունեցած մի միջադեպից հետո: Ինչպես նկարչի դուստրն է պատմում, Վիկտոր Համբարձումյանին եղնիկ էին նվիրել, որը ելքը գտել ու փախել էր: Այդ իմանալով՝ հայր ու աղջիկ գնացին Համբարձումյանների տուն: Ներկաների ցանկությունը մեկն էր՝ բռնել կենդանուն, սահմանափակել նրա ազատությունը, իսկ եղնիկը դես ու դեն էր նետվում, ցատկոտում ու չէր ուզում հանձնվել: Հենց այն խուճապը, բռնվելու սարսափն ու ազատության տենչը, որ համակել էր եղնիկին, հանդիսացավ «Ձգտում» կտավի ստեղծման հիմնական շարժառիթը: Բացի այդ, նկարիչը հոդվածագրերից մեկի հետ հարցազրույցի ընթացքում այս աշխատանքի մտահղացումը կապում է Գագարինյան՝ տիեզերք կատարած թռիչքի հետ: «1961-ին, – նշում է արվեստագետը, – Գագարինը կատարեց մարդու արտաերկրային առաջին

քայլը: Դա համայն մարդկության՝ դեպի տիեզերական անսահմանություն ձգտման մի արտահայտությունն էր, և իմ մեջ ծագեց այդ երևույթը պատկերելու ցանկություն» [1]: Այս վարկածը հնչում է Շաքե Փահլևանյանի հոդվածում ևս [2]: Սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ Գագարինի թռիչքը տեղի է ունեցել 1961 թ. ապրիլի 12-ին, իսկ կտավը վերաբերում է միայն 1960-ին, վարկածը ժամանակագրական առումով անհիմն է թվում: Կարծում ենք նաև՝ սպասվելիք իրադարձության մասին տեղեկատվությունը չէր կարող հասանելի լինել լայն հասարակությանը թռիչքն իրականացնելուց առաջ, քանզի չէր հրապարակվում: Գուցե «Ձգտման» հիմքում, իրոք, ընկած է եղել տիեզերականան անհունը բացահայտելու մարդկային տենչի գաղափարը (չէ՞ որ 1950-ականների վերջին է գրանցվել դեպի տիեզերք առաջին արբանյակների թռիչքը), բայց ո՛չ Գագարինի թռիչքի օրինակով: «…Մի բան պարզ է՝ ցանկացել եմ արտահայտել ապրող, շնչող արարածի ազատության տենչը», – ասում է նկարիչը [3]: Ուստի պատահական չէ, որ հորինվածքի «հերոսները» կենդանին ու մարդն են՝ իրենց կենսաձգտման մեջ ասես ձուլված ու պատրաստ թռիչքի, վերասլացման: Սա է թեմայի խոհափիլիսոփայական առանցքը:

Հերոսուհու կերպարն ստանալու համար Զարդարյանին բնորդեց դուստրը: Նկարչի խառնվածքի համաձայն՝ արվեցին բազում էքիզներ, որոնք դիտարկելիս հստակ երևում է այն ուղին, որով ընթացավ հեղինակի ստեղծագործական միտքը: Հորիզոնական ձևաչափի մեջ արված դիմանկար էտյուդին (1959 թ., նկ. 2) հաջորդել է նույն ձևաչափի մեջ արված ևս մի կտավ (անթվակիր), որտեղ դստեր կերպարին ավելացել է եղնիկի ամբողջական ֆիգուրը: Աղջկա դեմքի թախծալի, մելամաղձոտ արտահայտությանը, որ տեսնում ենք պորտրետում, այստեղ փոխարինել է եղնիկին գուրգուրող նրա սիրազեղ կեցվածքը: Ապա արվել են ևս երկու անթվակիր աշխատանքներ՝ արդեն ուղղահայաց ձևաչափի մեջ (անթվակիր, նկ. 3,), որոնցում գրեթե վերջնականապես գտնվել է կերպարների դիրքը և դեպի հեռուն զնացող կոմպոզիցիոն պլանների հերթագայությունը:

Նկ. 2. Նախապատրաստական նյութ «Ձգտում» հորինվածքի համար

Նկ. 3. Նախապատրաստական նյութ «Ձգտում» հորինվածքի համար

Ավարտուն տարբերակում (նկ. 1) պերսոնաժներն երևում են ամբողջությամբ պրոֆիլից, ուժգնացել է նաև մոնումենտալ-դեկորատիվ հնչեղությունը, խորացել փոխաբերական արտահայտչականությունը: Սինթեզվել են, ներկայանալով մեկ ամբողջության մեջ, զուսպ վեհությունն ու նրբին լիրիզմը: Կյանքում գեղեցիկն ընդհանրական, խորհրդանշական կերպով բացահայտելու նկարչի ձգտումն արվեստաբան Ն.Ստեփանյանի կարծիքով, առավել ցայտուն արտահայտվել է այս աշխատանքում [4]: Նկարիչը հրաժարվում է ծավալային պլաստիկայից, ֆակտուրային բնութագրությունից, դիմում համահարթված ձևերի՝

լուսակիր հատվածներում ուժեղացնելով գույնի հնչեղությունն ու լարումը: Սա ամենևին տուրք չէր ձևական որոնումներին, այլ օրինաչափորեն, տարիների, տասնամյակների տքնաջան աշխատանքի արդյունքում ձևավորված գեղարվեստական համակարգ: Ուղղաձիգ հորինվածքի կենտրոնում երիտասարդ աղջկա բարեկազմ ծնրադիր կերպարն է, որի սահուն պլաստիկան յուրովի «կրկնում» է եղնիկի կերպարը: Երկու կերպարների պլաստիկ արտահայտչականությունն ակնհայտ փոխաբերական է, բանաստեղծական: Հայուհու կեցվածքը, նրա պիրկ մարմնաձևերը սլացքի, ձգտման խտացում են՝ ուղղված դեպի վեհն ու գեղեցիկը, դեպի երազանքը, դեպի լուսավոր, երջանիկ գալիքը: Հորինվածքի հենք է ծառայում համապատկերային, բազմապլան բնանկարը: Առաջին պլանում ընդհանրացումներն առավել խոշոր են, սահուն, սակայն ծաղկամոտիվի մի քանի շեշտեր, այնուամենայնիվ, կռահվում են: Չափազանց նուրբ են «գծագրված» բարդիները, որոնք գրեթե ձուլվում են գեղանկարչական համակարգում: Մնացած հատվածներում ֆոնը ներկայացված է խիստ ընդհանրական ձևով, թեպետ պահպանվում է աստիճանաբար հեռացող պլանների տպավորությունը: Երկնքին նեղլիկ գոտի է հատկացված, անգամ հազիվ է երևում շողշողուն ծիածանի կամարը, սակայն դա էլ բավ է՝ ընկալելու ձգտմանը մշտապես ուղեկից հույսի խորհուրդը: Ամպրոպից, անձրևից հետո ասես «լվացված», մաքրված բնությունը մեզ է ներկայանում խաղաղ, տոնական, բայց և լռակյաց վեհությամբ: Գեղանկարչական ընդհանրացումները ներմուծում են որոշակի պայմանականություն, իսկ իրար նկատմամբ լրացուցիչ հանդիսացող կապտականաչի, երկնագույնի ու կարմրանարնջագույնի տեղային բծերը եղնիկի ու աղջկա կերպարներում ստեղծում են կարծես դեկորատիվ ուրվապատկերներ: Զվարթ հնչեղություն ստացած գունեղությունը ներդաշնակվում է վարդամանուշակագույն և կանաչակապտավուն խոշոր գունային գոտիներով: Ակներև է, որ Զարդարյանն ուշադրությունը սևեռել է հատկապես հորինվածքի գունային ռիթմիկայի վրա: Եթե նկարը մի պահ պատկերացնենք առանց եղնիկի կերպարի կարմրանարնջագույն գունաբծի, ապա աղջկա կերպարն ամբողջովին կձուլվի բլրի զմրուխտյա կանաչների ու հեռվում պատկերված հարթավայրերի կապտամանուշակագույն երանգներում: Յուրաքանչյուր մասնիկ այս առումով նախապես մտածված է: Ի դեպ, պահպանվել է «Զգտմանը» վերաբերող մի աշխատանք (1960, նկ. 4, բժիշկ Ռաֆֆի Մելքոնյանի անձնական հավաքածու), ուր սակայն, ներկայացված է հերոսների միայն վերին, դիմային հատվածը:



Նկ. 4. Զգտում,1960 թ.

Նկ. 5. Նախանկար «Պոռթկում» հորինվածքի առաջին տարբերակի համար

«Զգտում» հորինվածքի, կարելի է ասել, գաղափարական շարունակությունն է «Պոռթկում» նկարաշարը (1962–1964 թթ.), ուր պարզապես ձգտումը վերածվում է պոռթկման անզուսպ տենչի: Առաջին նախանկարներում դեռ պահպանվում է աղջկա և եղնիկի միասնական պատկերը (անթվակիր, նկ. 5)՝ կրկին տեղային, ընդարձակ քսվածքներով: Նկարիչը նրանց հետաքրքրությամբ լի հայացքներն ուղղել է վեր՝ դեպի երկինք, դեպի տիեզերք, իսկ յուղանկարի ֆոնն ամբողջությամբ վերածել խոշոր գունային գոտիների, որոնց հնչեղ գունաբծերն ի հայտ են գալիս մերթ շրջագծերի, մերթ ալիքվող ռիթմերի ձևով (այս առումով «Պոռթկմանը» և դրան նախորդած «Զգտմանը» վերաբերող շատ աշխատանքներ կարելի է համադրել

Մարտիրոս Սարյանի ստեղծագործական մայրամուտին վրձնած «Երկիր» (1969 թ.) և «Հեքիաթ» (1971 թ.) աշխատանքների հետ):



Նկ. 6. Նախանկար-դիմապատկեր «Պոռթկում» հորինվածքի առաջին տարբերակի համար



Նկ. 7. Նախանկար «Պոռթկում» հորինվածքի երկրորդ տարբերակի համար

Կրկին արվեցին բազմաթիվ դիմանկար էտյուդներ, նախանկարներ: Շուրջ երեք տասնյակի հասնող այդ էսքիզներում ակներև է աստիճանական անցում ռեալիստական մոտեցումից դեպի ոճավորված, պայմանական դեկորատիվություն: Սկզբում առանձին մշակվել է աղջկա գլուխը՝ նախ ռեալիստորեն (անթվակիր, նկ. 6), ապա՝ մեծ ընդհանրացումներով (անթվակիր): Աղջկա կերպարի հետագա մշակման ընթացքում դարձյալ ստեղծվում են տարբերակներ (անթվակիր), ուր բնորդուհին պատկերված է աղերսող հայացքը վեր ուղղած, ասես աղոթքի մարմաջը շուրթերին: Խնդրատուի այդ կեցվածքը, սակայն, չէր համապատասխանում ընդհանուր մտահղացմանը և չէր կարող տեղ գտնել «Պոռթկման» հետագա լուծումներում:

Հակառակ դրան՝ այն էսքիզները (1962 թ., նկ. 7), որոնցում պատկերված է միայն աղջկա ճկված, դինամիկ, կարծես թռիչքի պատրաստ ֆիգուրը, միանգամայն ներդաշնակում են «Պոռթկման» գաղափարին: Այստեղ ուրվագծի լարվածությունը, դառնալով խիստ արտահայտիչ, հասել է իր գագաթնակետին: Թվում է՝ հերոսուհին ուր որ է կկտրվի երկրից և կհասնի երկնային բարձունքներին: Հորինվածքի ձևաչափը ևս ուժգնացնում է ուղղաձիգ շարժման տպավորությունը՝ արտահայտելով առօրեականությունից վերանալու և մայր բնության գրկում, տիեզերքի անսահմանության մեջ անէանալու, նրա հետ նույնանալու՝ մարդ արարածի մղումը:

Յուղաներկով, ածուխով ու պաստելով արված նախապատրաստական հետագա աշխատանքներում (նկ. 8, անթվակիր) Զարդարյանը մանրամասն մշակում է աղջկա իրանը, ուսումնասիրում ձեռքերի ջղաձիգ, պրկված շարժումները՝ երբեմն նույնիսկ հրաժարվելով նկարել գլուխը: Արդյունքում արվեստագետը գալիս է իրանի խիստ ոճավորված պատկերմանը, որն ընկած է վերջին էսքիզների (անթվակիր) հիմքում: Այստեղ ֆոնը կրկին կառուցված է ընդարձակ գունային գոտիներով:

Նկ. 8. Նախապատրաստական նյութ «Պոռթկում» հորինվածքի երրորդ տարբերակի համար



Նկ. 9. Պոռթկում (երրորդ տարբերակ), 1964թ.

Գրեթե վերացական բնույթ ստացած վերջին, ամենաավարտուն տարբերակում (1964 թ., նկ. 9) սևի, կապույտի խուլ գուներանգների վրա երևան է գալիս հերոսուհու հարթային, ալ կարմիր ուրվապատկերը, որն ասես գալարվող ցավի ու կծկումի արտահայտություն լինի: Այստեղ խտացված է պրկման ողջ ուժը: Գրեթե չի ընդգծվում կանացի, մինչև իսկ՝ մարդկային սկիզբը: Այսպիսով, «Պոռթկում» նկարաշարի վրա աշխատելիս նկարիչը ընդհուպ մոտեցել է վերացականությանը:

Կարծում ենք՝ յուրաքանչյուր արվեստագետ ինքն է որոշում պայմանականության՝ իր համար թույլատրելի չափը և ազատ է սեփական արտահայտման ձևերն ընտրելու և անգամ կենսական ճշմարտացիությունից բոլորովին հեռու, նրան ամբողջովին հակադիր, մինչ այդ չտեսնված մի աշխարհ կերտելու մեջ: Ընդլայնելով իր ստեղծագործական դիապազոնը՝ Զարդարյանը կտավից կտավ փորձում էր գտնել իրենը, իր «ես»-ն արվեստում, բացահայտել իր պոետիկան: Ավաղ, տվյալ նկարաշարն առաջին անգամ ցուցադրվեց միայն 1998 թ.՝ Զարդարյանի հետմահու անդրանիկ պատկերահանդեսին:

ПУТЬ ОТ КАРТИНЫ ЗАРДАРЯНА «СТРЕМЛЕНИЕ» ДО РЯДА КАРТИН “ПОРЫВ”

Л. А. Арсенян
Национальный университет архитектуры и строительство Армении

Ключевые слова: *тематический жанр, Оганес Зардарян, Стремление, Порыв, ряд картин*

В армянском изобразительном искусстве советского периода одним из передовых художников тематического жанра был Оганес Зардарян. В его творчестве ведущее место занимают произведения, созданные в 1940-1950 гг. Однако в рамках данного жанра надежно закрепилась созданная в 1960 г.картина “Стремление, мотивация идеи и художественное развитие которой не известны ценителем искусства. Не известен и тот факт, что после известной картины «Стремление» мастер написал ряд произведений, которые можно сказать являются идейным продолжением «Стремления». Речь идет о композиции «Порыв» (1962-1964гг.), где стремление просто превращается в несдержанный порыв. Однако, эта картина впервые была представлена лишь в 1998г. на первой художественной выставке Зардаряна после его смерти. В творчестве мастера именно эти вышеупомянутые произведения свидетельствуют об изменениях, которые в течение многих лет сформировали своеобразный почерк и уникальный образ автора.

FROM ZARDARYAN'S "ASPIRATION" TO THE SERIES OF PAINTINGS "BURST"

L.A. Arsenyan
National University of Architecture and Construction of Armenia

Keywords: *thematic genre, Hovhannes Zardaryan, aspiration, burst, series of paintings*

One of the outstanding representatives of the thematic genre in the Armenian Soviet art was the painter Hovhannes Zardaryan. His compositions created in 1940-1950 took a pivotal place in his art. However, another composition - the "Aspiration" created in 1960 had its firm place and importance in his arts as well, while the motive of its creation and the creative process were unknown to art lovers. It was also unknown, that after his famous "Aspiration" the painter also attempted a series of paintings, which ideologically pushed forward the idea of the "Aspiration". These series of paintings are known as "Burst" (1962-1964) where the aspiration is simply turned into an irresistible desire for burst. Alas, they were exhibited only in 1998, during Zardaryan's maiden, post-mortem exhibition. In the creative life of the master especially the above-mentioned composition alarmed about the breaking changes that had shaped Zardaryan's unique handwriting and his exclusive personality over the years.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ավագյան Խ.** Արվեստի էությունը՝ հումանիզմը, 1978, № 4, էջ 12:
2. **Փահլևանյան Շ.**Զգտում, 1987, № 17, էջ 4:
3. **Փահլևանյան Շ.**Զգտում, 1987, № 17, էջ 4:
4. **Степанян Н.** Искусство Армянской ССР, 1967, с. 49.

Ներկայացվել է՝ 23.10.2017 թ.
Ընդունվել է տպագրության՝ 11.12.2017 թ.